ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Բանկային գաղտնիքի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-438[2] - 24.11.2022-ՏՀ-011/0) վերաբերյալ ներկայացված առաջարկների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկու-թյունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածում «Բանկային գաղտնիքի մասին» օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս առաջարկվում է շտկել օրենքի ընդունման ամսաթիվը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածում «(այսուհետ՝ Օրենք)» բառերն առաջարկվում է հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Օրենք» բառը քննարկվող նախագծում այլեւս չի կիրառվում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Հստակեցման նպատակով՝ Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետում առաջարկվում է համարակալումից հետո լրացնել «1-ին պարբերությունում» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը՝ առաջարկվում է «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը փոխարինել «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքով» բառերով: Միաժամանակ, Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետում առաջարկվում է «խմբագրությամբ» բառը փոխարինել «բովանդակությամբ» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է: